# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

« 23 » դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Նալբանդյանին

N 98

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ավագանու թիվ 27,28 որոշումները և համայնքի ղեկավարի թիվ 04 կարգադրությունը:

Առդիր՝ 4/չորս/թերթ:

Համայնքի ղեկավար Գ. Դունամալյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ 27

«20» դեկտեմբերի 2016թ.

ՀԱՄԱՅՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Շենավան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 20-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումներ քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Շենավան համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշման ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝ կողմ՝ Գ.Մովսիսյան

Ի.Դունամալյան

Պ.Կարապետյան

Հ.Միրզոյան

Ս.Կարապետյան

Դեմ՝ 0 (զրո )

Ձեռն.՝ 0( զրո)

Համայնքի ղեկավար՝ Գ.Դունամալյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Շենավան համայնքի ավագանու
2016 թվականի 20 դեկտեմբերի №27 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ա/2016թ.-ի բյուջեի 10-07-01-54 դասակարգման 4729հոդվածից.

1.Դունամալյան Անդրանիկ Հայկի-10000/տաս հազար/դրամ
2.Կարապետյան Պարույր Հենրիկի-10000/տաս հազար/դրամ
3.Սարգսյան Ռազմիկ Համայակի-15000/տասնհինգ հազար/դրամ
4.Մանվելյան Ասյա Պետակի-10000/տաս հազար/դրամ
5.Կարապետյան Ստյոպա Անուշավանի-10000/տաս հազար/դրամ

բ/2016թ.-ի բյուջեի 09-04-01-01 դասակարգման 4729հոդվածից.

1.Դունամալյան Անդրանիկ Հայկի-15000/տասնհինգ հազար/դրամ

Ընդամենը` 70000/յոթանասուն հազար/ դրամ:

Շենավան համայնքի
համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ.Աբրահամյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 28

« 20 » դեկտեմբեր 2016թ.

## 2016թ.-Ի ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Շենավան համայնքի ավագանին որոշում է.

1.2016թ. բյուջեի 09/02/01/51 դասակարգման 4269 հոդվածից 60.000 (վաթսուն հազար)դրամ գումար հատկացնել դպրոցին՝ ամանորյա նվերներ գնելու նպատակով:

2. 2016թ. բյուջեի 01/01/01/51 դասակարգման 4729 հոդվածից 60.000 (վաթսուն հազար) հազար) դրամ գումար հատկացնել համայնքապետարանին՝ամանորյա նվերներ գնելու նպատակով:

Ավագանու անդամներ՝

կողմ՝ Ի.Դունամալյան

Գ.Մովսիսյան

Հ.Միրզոյան

Ս.Կարապետյան

Պ.Կարապետյան

Դեմ՝ 0/զրո/

Ձեռն.՝ 0/զրո/

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն   N 04

« 23 » դեկտեմբերի 2016թ.

### ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ.-Ի ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դ.Լոքյանի 06.12.2016թ.-ի թիվ 01/15.1/5399-16 հանձնարարականի,Լոռու մարզպետի 07.12.2016թ.-ի թիվ 293 կարգադրության 2-րդ կետի և 08.12.2016թ.-ի թիվ 101/105.3/5853-16 գրության, Շենավան համայնքի 2017 թվականի անասնագլխաքանակի հաշվառման համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Աբրահամյան
անդամ՝ Ն.Աբրահամյան
անդամ՝ Ս. Հայրապետյան
անդամ՝ Գ.Աթիկյան
անասնաբույժ՝ Ս.Ռստակյան:

2.Հանձնաժողովին հանձնարարել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները վերջացնել եռօրյա ժամկետում: Արդյունքները մինչև հունվարի 20-ը ներկայացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության Լոռու մարզային գործակալություն:
3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 25.12.2015 թվականի թիվ 09 կարգադրությունը:

Համայնքի ղեկավար՝ Գ. Դունամալյան